Համաձայնագիր N ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-03/23-01
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՌԱԴԻՈԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-03/23» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «16» հունվարի 2023թ.

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկը, ի դեմս խորհրդի նախագահ Արա Շիրինյանի, որը գործում է ՀՀ կառավարության 2017 թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման Հավելված 1-ով սահմանված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի և Հանրային հեռարձակողի խորհրդի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Գարեգին Խումարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (կողմերից յուրաքանչյուրն առանձին հիշատակման ժամանակ այսուհետ նաև՝ Կողմ, համատեղ հիշատակման ժամանակ այսուհետ՝ Կողմեր) ղեկավարվելով Կողմերի միջև 2022 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված պետության կարիքների համար ռադիոարտադրանքի հետ կապված ծառայությունների մատուցման պետական գնման N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-03/23» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.13 կետով, ինչպես նաև հաշվի առնելով, որ նախատեսվել են ֆինանսական միջոցներ՝ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին.

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրում կատարվում են հետևյալ փոփոխությունները.

1. Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցում և Հավելված 2-ով սահմանված վճարման ժամանակացույցում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն Համաձայնագրի համապատասխանաբար Հավելված 1-ի և Հավելված 2-ի:
2. Պայմանագրի 7.1 կետի առաջին պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ. «Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են նաև 2023 թվականի հունվարի 1-ից սույն պայմանագրի առարկայի շրջանակներում կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ»:
3. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
4. Պայմանագրի՝ սույն համաձայնագրով չփոփոխված դրույթները մնում են անփոփոխ:
5. Սույն Համաձայնագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմի համար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5	ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011430189	Հ/Հ 1150009581381374
ՀՎՀՀ 01539597	ՀՎՀՀ 01541435
Խորհրդի նախագահ՝	Գործադիր տնօրեն՝
Ա. Շիրինյան	Գ. Խումարյան

Հավելված N 1
«16» հունվարի 2023 թ. կնքված
N ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-03/23-01 համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	92211100/501	Հաճախականությունների կամ հնարավոր այլ տեխնիկական միջոցներով (հաղորդիչ, արբանյակ, մալուխային ցանց, համացանց և այլն) «Առաջին ծրագիր», «Երկրորդ ծրագիր» («Իմ ռադիո»), «Արևիկ», «Հոգևոր-մշակութային», «Մշակութային», «Հանրային ռադիո Էյէմ» լսողական ծրագրերից յուրաքանչյուրով 8760 ժամ ընդհանուր տևողությամբ և Մերձավոր Արևելքի և հարևան երկրներում օտարալեզու լսողական ծրագրով 638.75 ժամ ընդհանուր տևողությամբ (ներառյալ պրոֆիլակտիկ աշխատանքների իրականացման համար և այլ տեխնիկական պատճառներով յուրաքանչյուր լսողական ծրագրի գծով թույլատրելի տարեկան ընդհանուր 24 ժամը չգերազանցող ընդհատումների ժամանակահատվածը) Հանրային հեռարձակողի խորհրդի կողմից հաստատված հաղորդացանցով նախատեսված լսողական հաղորդումների ապահովում:	դրամ	956,073,000.0	1	ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5	2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում ընդգրկված յուրաքանչյուր օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011430189
ՀՎՀՀ 01539597
Խորհրդի նախագահ՝
Ա. Շիրինյան

ԿԱՏԱՐՈՂ

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009581381374
ՀՎՀՀ 01541435
Գործադիր տնօրեն՝
Գ. Խումարյան

Հավելված N 2
«16» հունվարի 2023 թ. կնքված
N ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-03/23-01 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	92211100/501	Ռադիոարտադրանքի հետ կապված ծառայություններ	75,961,962.0	149,304,546.0	230,505,264.0	303,847,848.0	390,287,322.0	468,868,662.0	544,830,624.0	631,270,098.0	707,232,060.0	791,052,156.0	869,633,496.0	956,073,000.0	956,073,000.0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011430189
ՀՎՀՀ 01539597
Խորհրդի նախագահ՝
Ա. Շիրինյան

ԿԱՏԱՐՈՂ

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009581381374
ՀՎՀՀ 01541435
Գործադիր տնօրեն՝
Գ. Խումարյան